Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Այսօր երեխան չի սիրում կարդալ

Վերապատրաստող մենթոր՝ Արարատ Մովսեսյան

Դասվար ՝ Սոսե Օրդյան

2023

Ներածություն

Մարդկության կենսագործունեությունը և առաջընթացն ապահովող անհրաժեշտ գործոն է կրթությունը։ Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգի վրա՝ առաջնորդելով տարատեսակ խնդիրների լուծման անհրաժեշտություն։

Հայաստանի Հանրապետությունում խիստ հրատապ է դարձել կրթությունը ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու, ամբողջ համակարգը բարեփոխելու, կրթության բովանդակությունը նորովի սահմանելու, սկզբունքները ճշգրտելու անհրաժեշտությունն ու դրանց իրագործումը։

Այդ խնդիրները, թերևս, առավել դժվար կլինի լուծել, եթե փորձ չարվի կարգավորել ոչ ճիշտ աշխատանքի պատճառով առաջացած խնդիրը։

Այն է՝ այսօր երեխան չի սիրում կարդալ։

Այսօր երեխան չի սիրում կարդալ

Այս հիմնահարցը փորձում ենք լուծել՝ ստեղծելով միայն արտաքին բարեկեցիկ պայմաններ,ազատ ժամանակ և առատ գրականություն։ Շատ ծնողներ, իրենց երեխաների համար ապահովելով նման պայմաններ, զարմանում ու զայրանում են,երբ տեսնում են բացասական արդյունք։ Կարելի է համակերպվել այն մտքի հետ, որ նրանք չեն գիտակցում այդ բացասականի պատճառը։ Սակայն ուսուցիչների համար նման խնդիրների լուծումը պետք է լինի իրենց առաջնային պարտականություններից մեկը։ Այդ իմաստով կարծում եմ,որ այսօր առկա են բազմաթիվ թերացումներ։ Շատերից եմ լսում . <<Այսօր երեխան չի սիրում կարդալ>> արտահայտությունը։

Իսկ ինչու՞։

Բանն այն է,որ ոչ ոք չի ցանկանում տվյալ հարցի լուծումը փնտրել իր ոչ ճիշտ աշխատանքում։

Ի՞նչը կարող է այս խնդրի հաղթահարման խթան դառնալ։ Իմ կարծիքով՝ այստեղ կարևորվում են ուսուցիչների կողմից այս ուղղությամբ աշխատանքների ճիշտ ըմբռնումը և կազմակերպումը։ Տառաճանաչությունից հետո երեխան կարող ուժ է դառնում կարդալու համար։ Անշուշտ, համապատասխանաբար փոփոխվում է ընթերցվող նյութերի բովանդակությունը, ծավալը, թեմատիկան և նպատակադրումը։ Գիրք կարդալիս

երեխան ոչ միայն կապակցված խոսք կառուցելու կարողություն է ձեռք բերում, սովորում գրագետ խոսել,զարգանում ու հասունանում է մտավոր առումով,այլև կարողանում է մտքերը ճիշտ, գեղեցիկ, հակիրճ և գրագետ ձևավորել։ Ներկայումս գոյություն ունեն ուսուցման բազմաթիվ աշխատաձևեր,որոնց միջոցով հնարավոր է բարձր մակարդակի վրա դնել երեխայի գրավոր խոսքի կառուցումը։ Ինչպիսի աշխատաձևէլ կիրառելու լինենք,արդյունքը գոհացուցիչ կլինի, եթե կարողանանք երեխային սիրել տալ մայրենի լեզուն,հետաքրքրել ու շահագրգռել նրան՝ մայրենիի՝ ճիշտ ուղղագրության ձևավորման հարցում։ Յուրաքանչյուր երեխա դեռևս փոքրուց մեծերից լսում է բազմաթիվ հեքիաթներ, նույնիսկ չի ցանկանում քնել առանց դրանց։ Դեռևս այդ տարիքից նա սկսում է սիրել գիրքը, և ,անգամ կարդալ չկարողանալով ,ժամերով թերթում է այն։

Նախադպրոցական տարիքում երեխան մեծերից լսում է բազմաթիվ պատմություններ և հեքիաթներ։ Նա անհամբեր սպասում է բարու հաղթանակին. դա մեծ բավարավածություն է պատճառում նրան։ Այդ աշխատանքն առավել հետաքրքիր է դառնում այն ժամանակ,երբ ինքը ևս մասնակից է դառնում դրական կամ բացասական հերոսների պաշտպանությանը կամ քննադատությանը։ Մերօրյա երեխաներին ավելի շատ հետաքրքրում է տեխնիկան, համակարգիչը. չեն ցանկանում հեքիաթներ լսել։ Ինչ-որ բան պետք է փոխել ուսուցման մատուցման մեջ։

Այսօր մանկավարժության խնդիրներից է ուսուցման ակտիվացման ու արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումը։ Եվ դրանց կիրառումը պետք է սկսել վաղ տարիքից։ Ռեջիո- Էմիլյայի (Իտալիա) մանկական նախադպրոցական հիմնարկներում ծնունդ է առել Պատմելու խաղը. Երեխաները հերթով կանգնում են մի բարձրության վրա(այն ծառայում է որպես ամբիոն) և հատակին նստած ընկերներին իրենց հորինած պատմություններն են պատմում։ Ուսուցիչը գրի է առնում դրանք,իսկ երեխան հետևում է,որ նա ոչինչ բաց չթողնի ու չփոխի։ Հետո երեխան իր պատմածը պատկերում է մեծ նկարով։ Հետաքրքիր մեթոդ է «Հեքիաթների աղավաղումը»։

«Շուռ տված հեքիաթները» մեթոդը հարմար է տվյալ նյութը ծաղրապատճենելու և ունկնդրին զվարճություն պատճառելու իմաստով,նոր մտահղացումների է հանգ ավելի շատ օգտվում են մայրերը,երբ փոքրիկներն անընդհատ ուզում են լսել նոր հեքիաթներ։ Այս մեթոդը նպաստում է երեխայի խոսքի, մտածողության և երևակայության զարգացմանը։ «Հեքիաթի շարունակման մեթոդը» խթանում է երեխ արտահայտել է իր ցանկությունը հեքիաթը լսելուց հետո։ Այսպիսով՝

մանկավարժի առաքելությունն է հասնել այն բանին, որ երեխան կարողանա հասկանալ և գնահատել հեքիաթի էությունը, փորձի տեսնել իրական կյանքում հեքիաթների հերոսներին, տարբերել բարին ու չարը, դառնալ բարու կրողը և միշտ հավատալ նրա նպատակադրումները: Երեխայից պահանջվում է կարդալ փոքրիկ պատմություններ,նշել փաստերը, նկարագրել բնապատկերները, բնութագրել հերոսներին Ամբողջ հարցն այն է, որ նմանատիպ աշխատանքներում պետք է կարողանալ հետաքրքրել երեխաներին, սովորեցնել կարդալ և ընկալել պատմությունը՝ տարբեր տեսանկյուններից: Հարկավոր է վստահություն սերմանել նրանց մեջ իրենց իսկ ուժերի նկատմամբ և աստիճանաբար նրանց մղել ինքնուրույն աշխատանքի:

Կարևորում եմ երեխայի մեջ ընթերցանության նկատմամբ այդ փոքրիկ կայծի բորբոքումը և պահպանումը: Պետք է ճանաչել երեխային, ճիշտ առաջնորդել նրան հետագա ընթերցանության մեջ: Սկզբնական շրջանում հարկավոր է ընտրել այնպիսի հեքիաթներ,որպեսզի երեխան կարողանա կարդալ՝ առանց հոգնելու և ձանձրանալու: Նա աստիճանաբար ձեռք է բերում սահուն կարդալու տեխնիկա, իր մտքերն արտահայտելու հարուստ բառապաշար և սահուն խոսք:

Վերջապես ինչպե՞ս սերմանել երեխայի մեջ սեր դեպի ընթերցանությունը:
Երեխաների մեջ ընթերցանությունը զարգացնելու համար, լավագույն եղանակներից մեկը համարվում է նրա համար բարձրաձայն կարդալը:
Դպրոցական աշխատանքը լավ կատարելը առավել սերտորեն կապված է ընթերցանության հմտությունների հետ:
Շատ ծնողներ իրենց երեխաների համար նկարազարդ գրքեր են գնում այն հույսով, որ իրենց երեխան կսիրի ընթերցանությունը:
Իսկ ինչպե՞ս սովորեցնել երեխային սիրել գիրքը և կարդալ հաճույքով: Մենք այսօր ապրում ենք հեռուստատեսության և ինտերնետի մուլտիմեդիա աշխարհում: Դա նշանակում է,որ առաջնահերթությունն ավելի ու ավելի է տրվում աուդիովիզուալ տեղեկատվությանը, ինչն ընկալվում է ավելի հեշտ,քան տեղեկատվության տեքստը: Հենց դա է,ըստ մասնագետների, մեթոդականորեն սպանում երեխաների կարդալու և մեծահասակների ցանկությունը: Կան հրատարակություններ,որոնցում գեղեցիկ նկարները զբաղեցնում են ծավալի 90%-ը,իսկ տեքստը սահմանափակված է նրանց համար կարճ մեկնաբանություններով:
Բայց միջին դպրոցի շատ երեխաներ դադարում են կարդալ գրքեր, որոնք իրենց դպրոցի ուսումնական ծրագրի մաս չեն կազմում:
Ինչու՞ է դա տեղի ունենում:
Պատճառն այն է,որ գրքեր կարդալու սովորությունը երեխայի մոտ չի զարգանում դեռ վաղ տարիքից:
Ինչպե՞ս կարող են ծնողները սերմանել երեխայի մեջ սեր դեպի ընթերցանությունը.

- Կարդացեք ձեր երեխայի համար վաղ տարիքից սկսած։
  Երեխայի համար բարձրաձայն ընթերցելը անհրաժեշտ է ոչ միայն քնելուց առաջ։ Գնեք նկարազարդ մի քանի գրքեր ձեր երեխայի համար Թող նա ընկալի դրանք որպես խաղալիք։
- Հաճախակի այցելեք գրադարան։ Ձեր երեխայի հետ բացահայտեք նոր հետաքրքիր գրքեր և կիսեք նրա ուրախությունն այն պահերից, երբ սիրված հեղինակի նոր գիրքն ընկնում է նրա ձեռքը։
- Կարդացեք երեխայի համար որքան հնարավոր է հաճախ։

Ձեր երեխան քանի դեռ չի սովորել ինչպես վարվել սեղանի շուրջ, կարդալը հիանալի միջոց է նրան տեղում պահելու համար։

Ժամանակ հատկացրեք ամեն օր կարդալու համար։ Ծնողը պետք է կարողանա օգնել երեխային, որ նա հասկացված զգա իրեն, ունենա հաջողություններ։ Երեխային չի կարելի պարտադրել, պահանջել, որպեսզի նստի,գրի, սովորի դասերը։ Նրան երբեմն կարելի է թողնել ինքնուրույն գործել։ Լարվածությունն ու ճնշվածությունը ստիպում են, որ երեխան խուսափի դրանից։ Երեխան կարող է չհասկանալ և վախենալ նորից հարցնել։ Վախենում է, քանի որ չի ուզում սխալվել։ Անհրաժեշտ է վստահել երեխային։

Եթե ուզում եք երեխային օգնել, նախ պետք է հասկանալ ու ընդունել նրան այնպիսին, ինչպիսին կա անկախ նրանից,թե չի սովորում։ Յուրաքանչյուր երեխա ունակ է ինքնուրույն գլուխ հանել և հասնել հաջողության,եթե ծնողը չի սպասում,որ նա դա անի ամենայն գերազանցությամբ, կատարի այն, ինչն իր ընդունակություններից

Երեխան դասերը պետք է անի լավ տրամադրությամբ և ոչ թե ստիպողաբար:

Երեխաները կարող են ընտրել տեղ և ժամ, որտեղ կանեն դասերը,նույնիսկ երաժշտության ներքո: Ծնողները կարող են խրախուսել երեխային այն ամենով, ինչ նա սիրում է։ Օրինակ՝ շոկոլադ տալ, եթե սիրում է երգել, պարել, զբոսնել, ապա ցանկալի է դասերն անելուց առաջ դրանով զբաղվել,որպեսզի երեխան լցվի դրականով, տրամադրվի ու կարողանա իրականցնել դասապատրաստումը։

Երեխաներ կան,որ ծնված օրվանից գրքի սիրահար են,բայց շատերն էլ գիրք կարդալ չեն

Ի՞նչ անել այդ դեպքում։ Ի՞նչ անել, եթե երեխան չի ուզում

Գիրք կարդալիս մարզվում է ուղեղը՝ հիշողությունը, երևակայությունը , մտածողությունը։ ինչքան շատ է կարդում,այնքան նրա բառապաշարը հարստանում է, և դրան զուգահեռ զարգանում են նրանց կոգնիտիվ (իմացական) կարողությունները։

Վաղ տարիքում զարգացած կարդալու հմտությունները կապված են հետագայում բարձր ինտելեկտի

Կարդալը նպաստում է ուրիշների մտավոր աշխարհը ավելի լավ հասկանալուն։

Ընթերցանությունը լիցքաթափում է սթրեսից նպաստում է, որպիսի տարիքի հետ իմացական հմտությունները ավելի երկար պահպանվեն, նվազեցնում են Ալզհայմերի հիվանդության հավանականությունը:

Գիրք կարդալ չսիրելը հիմնականում առաջանում է հետևյալ պատճառներից՝ վարժվածության պակաս, խոսակցական և գրավոր խոսքի տարանջատում և մոտիվացիայի պակաս: Անհրաժեշտ է հասկանալ, թե այս պատճառներից ո՞րն է խանգարում ձեր երեխային և աշխատել այդ ուղղությամբ:

- Երեխաների համար գրքեր կարդացեք շատ փոքր տարիքից, նույնիսկ դեռ չծնված ժամանակ:
- Սովորություն դարձրեք երեխայի համար կարդալ շաբաթական 3-4 անգամ մոտ 20 րոպե, մինչև երեխան սկսի ինքնուրույն կարդալ:
- Անընդհատ քաջալերեք երեխային և ցույց տվեք ձեր գոհունակությունը, երբ նա գիրք է կարդում:

- Եթե ուզում եք, որ ձեր երեխան լինի ընթերցասեր, դուք էլ պիտի դրան ժամանակ տրամադրեք:
- Երեխային տվեք ընտրության իրավունք:
- Կարդալը համակցեք գործունեության հետ:
- Միասին քննարկեք երեխայի կարդացած գրքերը:

Նման աշխատանքի ճիշտ կազմակերպման դեպքում որոշ ժամանակ անց սովորողն իր պատասխանների մեջ դառնում է ավելի վստահ և անսխալ: Երեխան որքան սահուն է սկսում կարդալ, այնքան մեծանում է նրա սերը ընթերցանության նկատմամբ: Նա այլևս լուրջ դժվարությունների առջև չի կանգնում տնային հանձնարարությունների կատարման ժամանակ, դառնում է ինքնուրույն աշխատող աշակերտ: Նման սովորողների հետ աշխատելը հեշտ է, արդյունավետ և հետաքրքիր:

Երբ երեխան տարրական դպրոցից փոխադրվում է միջին դպրոց, ուսուցիչները, հաշվի չառնելով նրա ունակություններն ու կարողությունները, դարձյալ ոչ ճիշտ ձևով են կազմակերպում այդ ուղղությամբ տարվող աշխատանքները: Երբեմն աշակերտներին հանձնարարվում է կարդալ կոնկրետ գեղարվեստական գրքեր և չեն ստուգում: Լավագույն դեպքում բավարարվում են միայն աշակերտին հարցնելով՝ կարդացե՞լ է, թե՞ ոչ:

Այո աշխատանքի հաջողության մեջ կարևորում եմ մի հանգամանք ևս՝ ծնողների դերը: Նրանք կարող են օգնել ուսուցչին և ընդհակառակը՝ կարող են խանգարել՝ հիասթափեցնելով երեխաներին մի շարք արտահայտություններով. « ես այդքան կարդացի ինչ հասկացա, որ դու ինչ հասկանաս», «հասարակ խանութպանն ավելին է ստանում, քան ցանկացած գիտուն» կամ « այդ գրքով դու հետագայում տուն չես կարողանա պահել» և այլն:

Անհրաժեշտ է կազմակերպել ծնողների հետ հանդիպումներ, զրույցներ և բացատրական աշխատանքներ տանել: Նրանք, երեխային ընթերցանության մեջ կլանված տեսնելով, չպետք է խանգարեն, այլ փորձեն իրենց հերթին նպաստել այդ աշխատանքի դրական ընթացքին:

Ընթերցանությունը լռության և ինքդ քեզ լսելու հնարավորություն է, անվճար գնալու աներևակայելի տիեզերքներ և գտնելու քո տեղն աշխարհում: Դուք և ես հասկանում ենք սա,բայց ինչպես դա փոխանցել երեխային: Սկզբից հասկացեք,որ <<իմ երեխան չի սիրում կարդալ>> խնդիրը երեխայի խնդիրը չէ. դա ձեր խնդիրն է: Եվ դուք կզբաղվեք դրանցով: Հասկացեք,թե ինչու եք մտահոգված այս հարցով:

Ինքներդ ձեզ տվեք «ինչու՞» հարցը: Ինչու՞ եմ ես այդքան դժվարանում իմ երեխայի համար ավելի շատ կարդալ: Չէ՞ որ ընթերցանությունը զարգացնում է մտածողությունը:

Ինչու՞ եմ ուզում,որ իմ երեխան զարգացնի մտածողությունը: Իսկ ինչու՞ այսկերպ: Չկա՞ կախարդական հաբ,որ երեխան կարող է խմել և անմիջապես սիրել կարդալը:

Բայց մենք կարող ենք նրան նրբորեն հասցնել դրան:

Պետք է հասկանալ երեխայի շահերը: Վաճառեք նրան այն միտքը, որ կարդալը հիանալի է,հետաքրքիր և օգտակար:

Ի՞նչ խնդիրներ կարող են լուծել գրքերը: Պատմեք նրան գրքերի մասին, հետաքրքրություն առաջացրեք դրանց նկատմամբ: Խոսեք նրա հետ ապագա մասնագիտության մասին: Նա ի՞նչ է ուզում անել: Ասացեք,որ գրքերը կարող են օգնել նրան. այնտեղ նակարգրված են բազմաթիվ հաջողություններ և անհաջողություններ:

Եթե երեխան սիրում է հրաձգության խաղեր, առաջարկեք նրան առեղծվածային գեղարվեստական գիրք: Նրա հետ գնացեք գրախանութ:

Գոյություն ունի ամուր հարաբերություն ընթերցանության վերաբերմունքի և մեծահ

Շատ կարդալ սիրում են նրանք, ովքեր մեծ ընտրանի ունեն տանը: Ուրեմն՝ սկսեք ձեր երեխայի հետ կառուցել ձեր իսկ սեփական գրքերի հավաքածուն:

Ի վերջո, երեխան ձեզնից է օրինակ վերցնում: Եթե հեռուստացույց եք դիտում կամ ամբողջ երեկոն անցկացնում եք համակարգչի մոտ, ապա նույնը կանի երեխան:

Ընթերցելիս քննարկեք սյուժեն: Երեխային հարցրեք «ինպե՞ս կվարվես» հարցը: Օգնեք ձեր երեխային անալոգիա անցկացնել գրքի իրադարձությունների և իրական կյանքում հետաքրքիր դեպքերի միջև: Մարդիկ այսպես են պատկերացում կազմում

այն աշխարհի մասին, որտեղ ապրում են։ Գրքի բովանդակությունը իրականության հետ կապելու ունակությունը կարևոր է։ Այն երեխաները,ովքեր սովոր են քննարկել իրենց կարդացածը, ավելի լավ հարաբերություններ ունեն գրքերի և կյանքի միջև, և տեքստում ավելի մեծ իմաստ է տեսնում։ Բացեք այս ամենը երեխայի համաձայնությամբ։ Իսկ եթե նա չի ցանկանում քննարկել,ապա մի մոռացեք,որ սա ընթերցողի հաճույքներից մեկն է՝ լռել կարդացածի մասին։

Երեխաներին կարող եք ծանոթացնել գրաֆիկական վեպերի հետ։

Գրաֆիկական վեպերն ու պատմվածքները նման են կոմիքսների,բայց կարող են հիմնվել դասական գրականության վրա։ Սյուժեի փոխանցման հիմքը նկարչությունն է,ոչ թե տեքստը։

Կան երեխաներ, ովքեր լրագրեր են սիրում կարդալ։ Գնեք նրանց համար էլեկտրոնային գրքեր և ներբեռնեք։

Ռուսաստանի պետական մանկական գրադարանի տվյալների համաձայն՝ 5-10-րդ դասարանների գրեթե 90%-ը էլեկտրոնային գրքեր են կարդում համակարգչի էկրանից, նոթբուքից, iPad-ից։

Էլեկտրոնային գրքեր կարդալն ավելի արդյունավետ,հարմարավետ և օգտակար դարձնելու համար գնեք էլեկտրոնային ընթերցող,որն օգտագործում է էլեկտրոնային թանաքի տեխնոլոգիա։

Ի վերջո, ինչու՞ է երեխան այդքան ձգվում դեպի համակարգիչ, պլանշետ, հեռուստացույց։ Իհարե,պայծառ նկարների արագ փոփոխություն,դինամիկա, հատուկ էֆեկտներ։

Կարդալու ժամանակ ձեր երեխային սովորեցրեք առավելագույնս օգտագերծել իր երևակայությունը։ Նա յուրաքանչյուր պատկեր թող դարձնի ավելի պայծառ,ինչի ավելի բարձր, զագցմունքներն արտահայտի ավելի աշխույժ։ Նա իրեն թող պատկերացնի որպես գրքի գլխավոր հերոս և ոչ միայն արտաքին դիտորդ։

Եվ երբ երևակայության հոսքը նրան ամբողջությամբ գրավի, նա կհավատա,որ գիրքը ավելի լավ է, քան ցանկացած ֆիլմ։

Առաջարկեք նրան կարդալ։Կարող եք կարդալ ոչ միայն երեք տարեկան երեխաների,այլև 12-13 տարեկանների համար։Պարզապես առաջարկեք «Ուզու՞մ ես,որ այն քեզ համար կարդամ» ։

Մի 2 շաբաթ կարդացեք նրա համար,դադարեցրեք կարդալ ամենահետաքրքիր վայրում,և գուցե հաջորդ օրվա կեսին նրան տեսնեք գիրքն ավարտելիս, որովհետև

հետաքրքիր էր։ Սկսեք այն գրքերից մեկով, որը կհետաքրքրի ինչպես մեծերին, այնպես էլ երեխաներին։

Ինչու՞ է պետք՝ երեխաները գրքեր կարդան

Ընթերցանությունը եղել և մնում է ուսուցման հիմնական հմտությունը։ Դա առաջին հերթին տեղեկատվության կորզման գործիք է։ Մեծ բառապաշարով դպրոց եկած երեխան ավելի լավ է սովորում,քան այն երեխան, ով բառապաշարով շատ աղքատ է։

Ինչու՞ է այդպես։ Եթե մտածենք դրա մասին,ապա տարրական դպրոցում գրեթե ամբողջ ուսուցումը տեղի է ունենում բանավոր։ Մանկապարտեզի տարիքում երեխաները դեռ կարդալ չգիտեն կամ նոր են սկսում կարդալ, ուստի ուսուցիչը անընդհատ զրուցում է նրանց հետ՝ բացատրելով ուսումնական նյութը։ Այս պնդումը ճիշտ է և ընթերցանության, և մյուս առարկաների համար։

Դասավանդումը բանավոր է, և մեծ բառապաշար ունեցող երեխաները առավելագույնն ունեն, քանի որ նրանք հասկանում են իրենց սովորածի մեծ մասը։ Քիչ բառապաշար ունեցող երեխաները սկզբից չեն հասկանում, թե ինչ է կատարվում և ետ են մնում սովորելուց և ժամանակի ընթացքում ավելի ու ավելի շատ։

Մեծ բառապաշար զարգանում է այն երեխաների մոտ, որոնց հետ շատ են խոսում և բարձրաձայն կարդում։ Կարող ենք գալ այն եզրակացության, որ երեխան չի կարող արտասանել այնպիսի բառեր, որոնք նախկինում չի լսել։ Այս բառը հիշելու համար երեխան պետք է մի քանի անգամ լսի։ Ծնողները պետք է խոսեն իրենց երեխաների հետ, բայց բարձրաձայն կարդալը շատ կերևոր է։

Բարձրաձայն կարդալը նաև մեծացնում է երեխայի ուշադրությունը, ինչպես նաև հիանալի գովազդ է հենց ընթերցանության գործընթացի համար։ Երբ բարձրաձայն կարդում ես, հետարքրություն ես առաջացնում կարդալու նկատմամբ։ Երեխան, ում ծնողները կարդում են, կցանկանա սովորել կարդալ ինքն իրեն,քանի որ նա կցանկանա անել այն, ինչ անում են իր ծնողները։ Բայց եթե երեխան երբեք չի տեսնում ինչ-որ մեկին գիրք բացելիս, ապա դժվար թե նման ցանկություն ունենա։

Երեխայի ընթերցանության մակարդակը սովորաբար ցածր է լսողության մակարդակից մինչև ութերորդ դասարան։ Մասնավորապես, հինգերորդ դասարանցու համար կարելի է և պետք է կարդալ յոթերորդ դասարանի գրքեր։ Նման գրքերի սյուժեները գրավում են երեխաներին և ստիպում կարդալ։ Բարձրաձայն կարդալն իսկապես գրավում է երեխային,քանի որ երբ մենք կարդում ենք պատմվածքներ, երեխան խորասուզված է հետաքրքիր աշխարհով և նա պատրաստ է լսել և ընկալել դրանք ոգևորությամբ։

Բարձրաձայն կարդալու մյուս առավելությունն այն է, որ եթե ծնողն ինքը մանուկ հասակում շատ չի կարդացել, երեխայի համար կարդալը հնարավորություն է տալիս վերադառնալ մանկություն և կարդալ այն ստեղծագործությունները, որոնք նախկինում չի կարդացել

Եթե ամբողջ ընթերցանությունը կապված է միայն սովորելու հետ, ապա աշակերտի մոտ ձևավորվում է ընթերցանության նկատմամբ վերաբերմունք՝ որպես երրորդ կարգի զբաղմունք, և միչև նա ավարտի դպրոցը, նա կսպասի այն պահին, որպեսզի դադարեցնի դա

Նա կկարդա միայն դպրոցում և դպրոցի համար, բայց ոչ կյանքում և ոչ հաճույքի համար Ուսուցիչներն ինչքան էլ շատ զբաղված են և ուսումնական նյութ են սովորեցնում, բայց եթե նույնիսկ հաճույքի համար դասի ընդամենը հինգ րոպեն հատկացնեն ընթերցանությանը, տարվա վերջում հավաքած այս բոլոր <<հինգ րոպեները>> կդառնան ամենաշատը. մանկության վառ հիշողություններ

Մարդկային բարդությունը հասկանալու համար մենք պետք է գրքեր կարդանք Որքան շատ մարդիկ դա հասկանան, այնքան ավելի քիչ սարսափելի բաներ կկատարվեն մեր շուրջը:

10 հետաքրքիր փաստ ընթերցանության մասին

1. Մ. Գորկին մեկ րոպեում կարդում էր 4000 բառ:
2.Արագ ընթերցանության դեպքում աչքերը ավելի քիչ են հոգնում, քան դանդաղ ընթերցանության դեպքում:
3.Ի. Ստալինը օրական կարդում էր 400 էջ՝ համարելով դա նվազագույն նորմա:
4.Թ. Էդիսոնը կարդում էր 2-3 տող միանգամից, շնորհիվ առավելագույն կենտրոնացման՝ մտապահում էր էջերով տեքստեր;
5.Ավանդական ընթերցանության դեպքում ընկալման մակարդակը 60% է, արագ ընթերցանության դեպքում՝ 80%:
6.Բալզակը 200 էջանոց վեպը կարդում է 30 րոպեում:
7.Ընթերցանության ժամանակ ընթերցողի աչքերը, նայելով տարբեր տառերին, հաղորդում են տարբեր պատկերներ, իսկ ուղեղը դրանք միավորում է մեկ պատկերում:
8.Է. Գաոնը բառացիորեն հիշում էր իր ընթերցած 2500 գրքերը:
9.Նապոլեոնը 1 րոպեում կարդում էր 2000 բառ:
10.Ընթերցանության միջին կարողությամբ մարդու աչքերը մեկ գրքային տողի վրա դադար է վերցնում 12-16 անգամ, արագ կարդացողի աչքերը՝ 2-4 անգամ:
Կարդալու որակական հատկանիշները մի քանիսն են, որոնք իրար հետ սերտորեն կապված են ու փոխադարձաբար պայմանավորված: Հենց այդ հատկություններով էլ բնութագրվում է լավ կարդալը:

Կարդալու որակական հատկանիշներն են՝

1.Ճիշտ կամ անսխալ կարդալ,
2.Վարժ կամ սահուն կարդալ,
3.Հասկանալով կամ գիտակցելով կարդալ,
4.Արագ կարդալ,
5.Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ։

Ճիշտ կարդալ

<<Առաջարկված բնագիրը ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտն ընթերցելիս բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի ու տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը, երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ կարդալիս նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառի մեջ վանկերը և նախադասությունների մեջ բառերը ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան>>։

Սահուն կարդալ

Առաջարկված բնագիրը<<սահուն կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավոր չափով արագ ու սահուն ընթերցումը, ընդ որում, կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ընբռնմանը, ենթատեքստի կռահմանը>>։

Հասկանալով կարդալ

Հասկանալով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամաբանական կապը, վերլուծել կարդացածը։ Վերլուծելը թերևս այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում են ձևավորել տարրական դպրոցում։ Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերխնդիրն է։ Կարդացածը հասկանալ նշանակում է տեքստի մտքերը ներհյուսել տվյալ թեմայի վերաբերյալ իր իմացությանը, հաղորդվող տեղեկությունը կիրառել գործնականում, ինչպես նաև կարդացածին սեփական մեկնաբանությունը տալ։Կարդալու ուսուցումը սկսվում է տարրական դպրոցից, որն ուսուցման հետագա օղակներում միջոց։ Կարդալու և կարդացածը հասկանալու կարողության մշակումը բարդ և աշխատատար գործ է և բավական ճիգ ու ջանք է պահանջում ։ Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, երբ ընթերցանության ժամանակ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսք գնալու։ Կարդալու ընթացքում, երբ

ընթերցողն անընդհատ ընթերցում է նյութը, այդ ճանապարհով նա ստուգում է իր վարկածը, փորձում է իմաստավորել, հասկանալ իր ստացած տեղեկատվությունը։Արդյունքում ընթերցողը ոչ թե պասիվորեն ընկալում է այն, ինչ կարդում է, այլ նա իր վրա է վերցնում կարդացածն իմաստավորելու , նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը։

Արագ կարդալ

Կարդալու որակական այս հատկանիշը՝ որպես ժամանակի հետ կապված կենսական պահանջ, նոր է ձևավորվել։ Արագ կարդալու միջոցով կարճ ժամանակամիջոցում շատ տեղեկատվություն կարելի է ստանալ։ Հոգեբանների կարծիքով հասկանալով կարդալու համար ընթերցողն առաջին հերթին պետք է կարդա արագ։ Արագ կարդալը հասկանալով կարդալու կարողությունների զարգացմանը նպաստող ամենակարևոր գործոններից է։ Խոսքը լավ կարդալու մասին է, այսինքն՝ կարդալ խոսելու տեմպին համահունչ։

Արտահայտիչ կարդալ

Կարդալը արտահայտիչ է համարվում, այն ժամանակ միայն, երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով ու փոփոխությամբ վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ։ Կարդալը արտահայտիչ է, եթե կարդացողը կարողանում է վերակենդանացնել գրական հայերենի արտասանության ճշտությունը, հստակությունն ու բարձրությունը, խոսքի տրամաբանական ու հոգեբանական շեշտերն ու դադարները, ճիշտ է ընտրում կարդալու տեմպն ու հնչերանգը։

Եզրակացություն

Իհարկե, այս հարցի շուրջ կարելի է երկար խոսել, բայց կարծում եմ հիմնականն ասվեց՝ ուսուցչին կողմնորոշելու ուղղությամբ

Ուստի եկեք մեր մեջ մշակենք բոլորիս կողմից անհանդուրժողական վերաբերմունք այդ երեխայի նկատմամբ,հասկանանք ու վստահենք երեխային

Եվ «Մշակելով երեխայի արտահայտիչ ընթերցանությունը՝ նրան հավաստիացնում ենք,որ գեղեցիկ ընթերցելն արվեստ է՝ ինչպես գեղեցիկ երգը,որը

հիացնում է մարկանց, և լսվում հաճույքով Այն ձևավորում է գրական ճաշակ,բարձրացնում լեզվական մշակույթը,ազդում սրտի և զգացմունքների վրա,նպաստում մտածողության զարգացմանը,հարստացնում գիտելիքները»

Ղ. Աղայան

Օգտագործված գրականություն

1.Ա. Ե. Տեր-Գրիգորյան- Ընթերցանության մեթոդիկա
2.<<Նախաշավիղ >> գիտամեթոդական ամսագիր
3.<<Նախաշավիղ >> 4-5 2008 Հեքիաթի ուսուցման նոր մեթոդներ
4. Վանենի Վարդանյան MSC, MA - Հոգեբանության մագիստրոս,հոգեբան
5. erexa.am Ինչպես սերմանել երեխայի մեջ սեր դեպի ընթերցանություն
6. travelers.am- ինչպես երեխայի համար կարդալ
7. motherhouse
8.Գյուլամիրյան Ջ. Հ. հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր. 2006
9.Պետրոսյան Հ. Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մոդուլային ուսումնական ձեռնարկ, Եր.2008